Դարույր Սևակ

Երբ Մարսի վրա զբաղված էի

Երբ Մարսի վրա զբաղված էի երկրագործությամբ՝
Երազկոտ նստած իմ քաղաքային նեղլիկ սենյակում,
Իմ խեղճ դռնակը հանկարծ ենթարկվեց ահեղ փորձության.
Դու էիր թակում.
Ես դա զգացի,
Ինչպես թռչունն է զգում վերահաս փոթորկի շունչը՝
Թռչունն այս դեպքում բույնն է շտապում,
Իսկ քանի որ ես իմ բնումն էի,
Էլ ի՞նչ էր մնում,
Որ ի՛նչ անեի.
Ու ես փակեցի աչքերըս վախով,
Թերևս ակամա ես հետևեցի
Զայլամի հիմար իմաստնությանը:
Իսկ դու որսորդ ես.
Եվ չսպասեցիր իմ «համեցեք»-ին,
Ի՛նքդդ ներս մտար:
Աստվա՛ծ իմ,
Չէ՞ որ մի փոքրը առաջ
Ես Մարսի վրա
Զբաղված էի երկրագործությամբ:
Եվ ահա փչեց քամին փորձության,

Եվ ահա խոփը դիպավ ժեռ քարին,
Իսկույն չքացան ցորենն ու գարին,
Դեմը լոկ մնաց դեմքն այդ ցորնագույն
Ու գարեհատիկ վզնոցը զնգուն,
Մնացին միայն աչքերը՝
Նրա՜նք,
Որ միշտ կյանքիս մեջ ցանում են վարանք...
Ես չէի նայում աչքերին, դիտմա՛մբ,
Որ կեռ հոնքերի բացմամբ ու կիտմամբ
Փոխում են և՛ ձև,
Ե՛վ ցոլք ու երանգ:
Ես չէի նայում,
Բայց զգում էի,
Որ պիտի նայե՛մ,
Որ չե՞մ դիմանա,
Եվ նայեմ թե չէ՝
Իսկույն կիմանա,
Որ իմ կյանքի մեջ ոչի՞նչ չի փոխվել,
Որ առաջվա պես այդ ինքն է մխվել,
Մխվել իմ կյանքում,
Մխվել՝ որպես սեպ,
Որ ո՛չ ճեղքում է,
Ո՛չ դուրս է գալիս...
Ես չէի նայում,
Որ անինքնասեր իմ լեզուն հանկարծ
Չասի. «Ցանկալի՜ս»:
Եվ իմ ցավատանջ գլխի կեսդարձով,
Առանց նայելու երեսին նրա,
Սուտ հանգըստություն երեսիս վրա՝
Նրան եմ դիմում նույն հիմար հարցով.

-Քեզ ի՞նչն է այսպես իմ դուռը բերում:
Նա հապաղում է,
Ես՝ մտաբերում,
Հիշում եմ հանկարծ
Եվ... մռայլ ու կարճ
Պատասխանում եմ ինքըս իմ հարցին.
-Հայտնի է կարծեմ,
Որ հանցագործին
Նրա ոտքերը սիրում են տանել
Այնտեղ, որտեղ նա... մարդ է սպանել...
Ելնում է ոտքի:
Հանգիստ է: Վսեմ:
Ասածըս կարծես նույնիսկ չի լսել:
Ու դուրս է գնում այնպիսի՛ քայլքով,
Ասես ուզում է իր կրունկներով ողջե՛րթ նվագել:
Գնում է,
Թողնում,
Որ... Մարսի վրա կատարած ցանքիս
Բերքը հավաքեմ...

15.X.1959թ. 18.XI.1959թ.
Չանախչի